ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ. Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոց

10^{6} դասարան

Տնօրեն՝ Ա. Պետրոսյան

Դասղեկ՝ Ֆ. Կարապետյան

ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ

2023-2024

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

10^6 ֆիզմաթ հոսքով դասարանում սովորում են 12 աշակերտ՝ 10 տղա, 2 աղջիկ: Աշակերտների մոտ նկատելի է միջին առաջադիմություն, կազմակերպվածություն, կարողանում են միասնական որոշումներ կայացնել: Դասարանը ակտիվ և համախմբված է: Աշակերտները համերաշխ են: Աշակերտները վայելում են ուսուցիչների սերն ու հարգանքը, արդեն իսկ նկատելի է ուսուցիչ-աշակերտ վստահելի փոխհարաբերությունները:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

2023-2024 ուստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիրակության աստիճանը, նպաստել նրանց մտավոր կարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Համագործակցելով դասավանդող ուսուցիչների հետ բարձրացնել ուսման որակը և առաջադիմությունը: Անհատական աշխատանքների միջոցով նպաստել ուսման մեջ թերացող աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ(կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն): Նպաստել սովորողների բարձր գիտակցականի ձևավորմանը՝ սեփական մշակույթի, ավանդույթների, բարոյական չափանիշների պահպանման գործում:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Արմատավորել ազգային ոգին, ավանդույթները: Կարևորել հայեցի դաստերակությունը, սեր արթնացնել հայ հոգևոր մշակույթի, գրականության, երաժշտության, արվեստի հանդեպ: Կարևորել սեփական լեզվի պահպանումը: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտություն և ճաշակ: Սովորեցնել նրանց գնահատել արվեստը: Այցելել պատկերասրահներ, մշակութային կոթողներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ուշադրության կենտրոնում պահել ռազմահայրենասիրական դաստերակությունը: Յուրաքանչյուր աշակերտ պետք է գիտակցի, որ մեր բանակը մեր հպարտությունն է, և պետք է ամուր պահել մեր հայրենիքի սահմանները: Հայրենասիրության կրթության վերաբերյալ դիտել ֆիլմեր, կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների և հերոսների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում:

4. Դպրոց-ընտանիք կապը

Աշակերտները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս. շաբաթներ	Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը
1.	Գիտելիքի և դպրության օր: Գիտելիքը ուժ է:	04.09.2023
2.	Ազնիվ ու անկեղծ հարաբերությունները մեր դասարանում:	11.09.2023
3.	Հայրենասիրությունը սկսվում է դասարանից: Իմ ու քո Հայաստանի անկախությունը:	18.09.2023
4.	44 օրյա պատերազմը և դրա հետևանքները:	25.09.2023
5.	Իմ երկիրը երեկ այսօր վաղը:	02.10.2023
6.	Քո աշխատանքն անգնահատելի է ուսուցիչ:	09.10.2023
7.	Մասնագիտության ճիշտ ընտրության կարևորությունը:	16.10.2023
8.	Ճիշտ ինքնագնահատականի կարևորությունը մարդու կյանքում:	30.10.2023
9.	Իմ երազանքի անհատը:	06.11.2023
10.	Հանդուրժողականություն: Ես հանդուրժո՞ղ եմ:	13.11.2023
11.	Իմ իրավունքներն ու պարտականությունները:	20.11.2023
12.	Մարդիկ առանց որոնց ես միայնակ եմ:	27.11.2023
13.	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը:	04.12.2023
14.	Համակարգի՞չ, թե՛ գիրք:	11.12.2023
15.	Սիրո՞ւմ եմ Ամանորը, քննարկում:	18.12.2023
16.	Առաջին կիսամյակի ամփոփում:	08.01.2024
17.	Շրջապատող բնության կարևորությունը մեր կյանքում:	15.01.2024
18.	Ազգ հայրենիք: Մեր հերոսները:	22.01.2024
19.	Կարողանում եմ արդյո՞ք ներել:	29.01.2024
20.	Բարոյական արժեքներ, որոնք իմաստավորում են մեր կյանքը:	05.02.2024
21.	Գիրքը մեր բարեկամ:	12.02.2024
22.	Անաղարտ պահենք մեր մայրենին:	19.02.2024
23.	Մեր տան ճրագն է ՄԱՅՐՍ:	26.02.2024
24.	Ծնող-երեխա հավերժ հակասությունները:	04.03.2024
25.	Կնոջ դերը հասարակության մեջ:	11.03.2024
26.	«Խիղճ» ամենաանաչառ և խիստ դատավորը:	18.03.2024
27.	Լրատվամիջոցներ և կերպարներ:	01.04.2024
28.	Արդյո՞ք ես մեդիագրագետ եմ:	08.04.2024
29.	Վատ սովորություններ: Պայքար դրա դեմ:	15.04.2024
30.	Մենք դատապարտում ենք ցեղասպանությունը:	22.04.2024
31.	Միջավայրի աղտոտումը և կլիմայի փոփոխությունները:	29.04.2024
32.	Ի՞նչ կանեի, եթե....:	06.05.2024
33.	Հայաստանի առաջին հանրապետության օր:	13.05.2024
34.	Տարվա ամփոփում:	20.05.2024